

Bangladesh: Armenian Community and the Armani Church in Dhaka

By Igor Grigorian

In early 1600s, when Shah Abbas conquered Eastern Armenia, he ordered deportation of some 40,000 Armenia traders specialized in inter-Euroasiatic trade to Isfahan and New Julfa. Following the footsteps of Persian adventurers some of them came to Bengali, and in the course established there their own trading community recognized by the Mughal rulers. Based on the evidence of dates on the tombstones it is safe to assume that first Armenians came to Dhaka in the middle of the 17th century.

The Armenian community played significant role in Bengali trade and commerce in the 17th and 18th centuries. Since late 17th century Armenians were mostly engaged in export trade paying a duty of 3.5% to the government. *Nawabs*, i.e. Governors of regions (our readers probably know its anglicized and russianized version Nabob), are known to have engaged them to transact their personal businesses openly or clandestinely as well as the European maritime companies, who used them as local representatives and their *vakils* (spokesperson) to the royal courts. In the silk market the Armenians were dominant buyers; they were prominent in the jute trade as well.

Soon upon the arrival in the beginning of the 18th century, Armenians settled in Dhaka, one of the important commercial centers in Bengal. They initially built a chapel and cemetery at Tejgagon, five miles from Dhaka. Led by the Pogoses, Agacy, Michael, Stephen, Joakim, Sarkies, Arathon (spelled as Aratun), Coja (Khojah) and Manook (Manuk) families, Armenians played major role in the commercial life of Dhaka. There is still a *Manuk House* inside Bangabhaban bearing the name of the original owner's family. Apart from Dhaka, there was a significant Armenian presence in Saidabad (a suburb of the capital Murshidabad), Hoogli, Kolkata, Chinsura, Patna and Kasimbazar.

The Armenians also played a major role as patrons of education and urban development in Dhaka. The Pogose School, the first private school in the country was founded by JG Nicholas Pogose, a merchant and a zamindar. By 1868, five of the six European zamindars in Dhaka were Armenians - JG Nicholas Pogose, GC Paneati, J Stephen, JT Lucas and W Harney.

P. Arathon was the headmaster of the Normal School. According to the Dhaka Prakash, a newspaper of his time, students in this school scored better in examinations than students of other normal schools in Bengal, including the one in Hoogli. Margar David, Mackertich Abraham George, Michael Sarkies (*who introduced horse carriages as a mode of transportation in 1856. At that time, the number of carriages was only 60, but by 1889 the number had increased to 600*), Abraham Lucas, M Highcazony, A S Mackertich, Tigran Nahapiet, Thaddeus Nahapiet, M.J. Catchhatoor, Joseph Lazarus, and M David were other prominent Armenians of Dhaka.

Dhaka was not the only center of Armenian influence in the region, there were other Armenians who rose to prominence for all of Bengal. The following names were taken from Wikipedia, as the author was unable to find other more reliable resources.

- **Khojah Phanoos Kalandar:** The earliest noted Armenian who entered into an agreement with the East India Company for using English ships for trade by himself and other members of his community in 1688.
- **Khojah Israel Sarhand:** A nephew of Khojah Phanoos, he helped the English to secure the Company's Kolkata zamindari (landlord) from Subadar Azim ush Shan in 1698, and was a *vakil* (spokesperson) of the Company's Surman Embassy to the Mughal Emperor Farrukh Siyar. He was instrumental in realizing the grand imperial *farman* (decree) of 1717 granting extraordinary privileges to the Company.
- **Khojah Petrus Nicholas:** He was court advisor and financier to Nawab Alivardi Khan, and a leader of the Armenian community.
- **Khojah Wajid:** The most notable Armenian in Bengal. A monopolist in the highly profitable saltpetre trade (one of the most important commodities in the export list of the European companies) since 1753, this Armenian merchant conducted most of the negotiations between the Company and Nawab Siraj ud-Daulah. Son of Khojah Mahmet Fazel, an influential Armenian merchant in the mid 18th century, he obtained footholds in the durbar of the Nawab as a *vakil* for his community in 1740s and eventually rose to be a member of the Nawab's inner-circle. It was said that Wajid wanted to be on good terms with everybody. He owned at least six ships - *Salamat Ressian*, *Salamat Manzil*, *Mobarak*, *Gensamer*, *Medina Baksh* and *Mubarak Manzil*. The East India Company took over his saltpetre empire in 1758, which grew to generate an annual revenue of 1 million Rs. in 1773. In 1759, he was captured and jailed by the Company, where he poisoned himself. After his death, Khojah Petrus Aratoon took over as leader of the Armenian community in Bengal.

- **Khojah Gregory:** Popularly known as Gurgin Khan, he was a brother of Khojah Petrus and a minister to Nawab Mir Qasim as well as the Commander-in-Chief of his army. He is cited by Gholam Hossein in *Siyar-ul-Mutakhkherin* as the chief of the artillery and the Nawab's principal serviceman. An assassin killed him after the Battle of Giria (August 1763).
- **JG Nicholas Pogose:** Popularly known as Nicky Pogose, he was a zamindar, a merchant, a partner of the first bank in Bangladesh - Dhaka Bank - and one of nine commissioners of Dhaka Municipality (1874-1875).

When the British period ended and Pakistan period started here, the Jute and Nil (kind of trees that are used to produce the color of blue) trade business started to take losses and 13 Jute mills were closed. Thus, the Armenians started leaving the country and searching for other countries to start their business.

Neighborhoods in Dhaka and Kolkata still bear Armenian names – Armanitola and Armanighat. No wonder that in Dhaka the Church of the Holy Resurrection (popularly known as the Armani Church) built in 1781, and the cemetery (the grounds for which were donated by Agah Catchik Minas) stand as major landmarks in Armanitola. The church was consecrated by Bishop Ephraim, who later became Head of the Armenian Church and the Catholicos of All Armenians in Echmiadzin in 1809.

As the Armenians achieved ample success in trade, Mughal Emperor Akbar permitted them to preach. The Armenian Church in old Dhaka became one of the meeting places for the Orthodox Armenian Christians. Some historians, including Dr. Mesrob Jacob Seth relate that the church was built on the site of an earlier, wooden chapel which served the cemetery (approximately in early 1600s). The original church was paid for through the beneficence of the Armenian merchants (jute trade) Michael Sarkies, Astwasatoor Gavork, Magar Pogose, and Khojah Petrus.

In 1837 the Armenians had built a Clock Tower on the west of the church; the steeple stood 200 ft on four columns and could be seen even from Narayanganj (15 km away from Dhaka). The sweet sound of the church bell used to create a pleasant environment in the surrounding areas. The tower collapsed in the earthquake of 1897. Later a smaller tower was built during reconstruction, although the clock was not fixed again. There are four traditional church bells in the tower, but they stopped telling long ago. Originally peach-pink in color the church is now painted in yellow and white with 4 doors and 27 windows. The Church has a chapel with a balcony and the original wooden pew seats for 100 people.

As the Armenian community in Dhaka diminished, it became a place of meeting for all Orthodox Christians. These days, the Armenian Church holds only occasional services on important dates in the Orthodox Christian calendar, with a Catholic priest from a nearby seminary coming in to lead prayers at Christmas. The caretaker Mikel Housep Martirosian, known by his anglicized name Michael Joseph Martin said the once-busy social scene came to a halt after the last Orthodox priest left in the late 1960s, but he is determined to ensure the church's legacy endures. Later the Armenian Archbishop from Australia would hold ceremonies there twice a year. On November 16, 2008 His Holiness Karekin II, Supreme Patriarch and Catholicos of All Armenians, paid a one-day visit to the Armenian Church of the Holy Resurrection. The trip to Dhaka was made during His Holiness' pontifical visit to India.

The records of the church are full of invaluable historical reference; they list over 200 deaths between 1833 and 1918, over 250 baptisms and over 50 marriages. White and black marble tombstones display family names such as Sarkies, Manook and Aratoon from the time when Armenians were Dhaka's wealthiest merchants with palatial homes who traded jute, spices, indigo and leather.

During the course of the Liberation War, the church did not escape the usual fate of other historical sites: the silver setting and organ were stolen and many of the graves were desecrated.

The Church of the Holy Resurrection is described by visitors who explore it as *haven amid the traffic chaos and crowded streets outside*. "Roads nearby are so crowded that services cannot be held during the working week because the multi-denominational expatriate congregation would never get there on time," notes Alastair Lawson, BBC Bangladesh correspondent, who on January 10, 2003 wrote an article named *The Mission of Dhaka's Last Armenian*.

To the importance of this church to the cultural and archeological heritage of Bangladesh testifies the fact that on April 30, 2001 Bangladesh Post issued a block of 4 stamps (Scott # 634) in the series Archaeological Relics of Bangladesh depicting Houses of Worship, where on # 634c is depicted the Armenian Church in Armanitola.




At the time of the article we mentioned above, Mikel Housep Martirosian, known by his anglicized name Michael Joseph Martin was 73 years of age. "I may be the last resident Armenian in Bangladesh, but I will do everything in my power to ensure that an Armenian from abroad takes over the job I have been doing. Otherwise centuries of tradition will disappear overnight," he has told the reporter. "I've seen bad days before, but we always bounced back. I am sure Armenians will come back here for trade and business. I will then rest in peace beside my wife."
 The Church of Resurrection still bears witness to the glorious past of the Armenians in Dhaka. But for how long?


Sources:

- Alastair Lawson, *The Mission of Dhaka's Last Armenian*, BBC News, 2003.
- Bohemian Tithi, *Armenian Church and Armenian Community in Dhaka*. *The Daily Kaaler Kantha*, 2002.
- Dyuti Monishita, *The Last of the Armenians in Dhaka, Bangladesh*, Armanitola. 2008
- Nadim Qadir, *Bangladesh's heritage disappearing through neglect*, Agence France Presse, 2002.
- Shafiq Alam, *AFP, Bangladesh's Last Armenian Prays For Unlikely Future*, 2009.
- www.armenianchurch.org, 2008.
- www.traveladventures.org, 2011.
- Wikipedia

Registered airmail cover franked with a single Armenian Church stamp mailed from Dhaka Bangladesh to Kabul Afghanistan.



FDC with the set of the four stamps, Scott Catalogue #634 with special cancellation commemorating the Archaeological Relics of Bangladesh.




All of the postcards featured on this page and following page are franked with the Armenian church stamp prepared by Ansar Uddin in Dhaka.

Postcard showing the altar of the Armenian church decorated with local flowers.



Postcard showing the exterior section of the Armenian church with the background of residential buildings.



Three different postcards showing the exterior parts of the Armenian church.

Բանգլադեշ. Հայկական Համայնք և Դհաքայի Հայկական Եկեղեցի

1600-ականների սկզբներին, երբ Շահ Աբրահամ գրավեց Արևելյան Հայաստանը, նա հրամայեց Իսֆահան և Նոր Զուղա տեղահանել շուրջ 40 հազար հայ վաճառականների, որոնք հմտացած էին եվրոասիական առևտրական նրբությունների մեջ:

Խույս տալով պարսկական արկածախնդրական ավանդույթներից, այս վաճառականներից ոմանք թողեցին Իրանը և եկան Բենգալ, հաստատելով այստեղ իրենց առևտրական տները, ճանաչումի արժանանալով նաև ժամանակաշրջանի Մուգոլ տիրապետողների կողմից:

Հեմլելով գերեզմանաքարերի տարեթվերի և տվյալների վրա, կարելի է վստահորեն պնդել, որ առաջին հայերը Դհակա են եկել 17-րդ դարի կեսերին:

Հայկական համայնքը կարևոր դեր է ունեցել Բենգալի 17-18 դդ. առևտրական և վաճառական կյանքի մեջ: 17-րդ դարի վերջերին, հայերը մեծ մասամբ ներգրաված էին ապրանքների արտածման մեջ, վճարելով կառավարությանը մաքսատուրքի 3.5 տոկոսը: Տեղական կառավարիչները օգտվում էին հայերի ծառայություններից իրենց սեփական գործերի ազատ կամ քողարկված ղեկավարման, ինչպես նաև եվրոպական ծովագնացությունն ապահովող ընկերությունների հետ տեղական կապերի հաստատման, և աստյաններում նրանց գործերի ներկայացուցչության համար: Մետաքսի առևտրում, հայերը որպես գնորդներ, տիրապետող դիրքերում էին. նույնն էր պարագան նաև ծուֆի առևտրում:

Արդեն 18-րդ դարի սկզբներին, հայերը կազմակերպված համայնք էին Դհակայում, որը Բենգալի ամենակարևոր առևտրային կենտրոններից էր: Սկզբից նրանք Թեյգագոնում կառուցել են մատուռ և գերեզմանոց, Դհակայից հինգ մղոն հեռավորության վրա: Քաղաքի տնտեսության մեջ հայտնի են Պողոսի, Աղասու, Միքայելի, Ստեփանի, Հովակիմի, Սարգսի, Արուսյունի, Խոշայի և Մանուկի ընտանիքների խաղաղացած դերի և ազդեցության մասին: Մինչև հիմա Բանգալահարանում գոյություն ունի «Մանուկի Տուն»-ը, որպես վկայություն նրա ընտանեկան անցյալի փառքի:

Բացի Դհակայից, զգալի հայակական ներկայություն է եղել Սեյդաբադում (մայրաքաղաք Մուրշիդաբադի արվարձաններից), Հուդալում, Կոլկատայում, Չինսուրայում, Փաթնայում և Կասիմբազարում::

Հայերը Դհակայում նույնպես ունեցել են մեծ դեր որպես հովանավորներ կրթության և քաղաքաշինության զարգացման բնագավառում: Պողոսյան դպրոցը, որը առաջին մասնավոր դպրոցն էր երկրում, հիմնադրել է վաճառական և հողատեր Նիկողայոս Պողոսը:

Արդեն 1868-ին, քաղաքի եվրոպական վեց տանուտեր-հողատերերից հինգը հայեր էին. Նիկողայոս Պողոս, Գ.Ս. Փանեաթի, Զ. Ստեփան, Զ.Թ. Ղուկաս և Ու. Հարնի:

Պ. Արուսյունը տնօրենն էր մանկավարժական դպրոցի: Ըստ այդ ժամանակվա «Dhaka Prakash» թերթի, այս դպրոցի ուսանողները, քննական շրջանի հնարավորից վաստակել են ավելի լավ միավորներ, քան այն ուսանողները, որոնք սովորել են Բենգալի կրթադաստիարակչական այլ դպրոցներում, ներառյալ «Hoogli»-ում սովորածները:

Իսկ Սարգսար Դավիթը, Մկրտիչ Աբրահամ Գևորգը, Միքայիլ Սարգիսը (նա 1856-ին ներդրել է ձիակառք վագոնների գաղափարը որպես տրանսպորտային միջոց: Նշենք, որ այն ժամանակ, ֆայտոնների թիվը ընդամենը 60 էր և շնորհիվ այդ նորամուծության, արդեն 1889-ականին, կառքերի թիվն ավելացել էր փնչև 600), Աբրահամ Ղուկասը, Մ. Հայկազունը, Ա. Մկրտիչը, Տիգրան Նահապետը, Թադեոս Նահապետը, Մ.Զ. Խաչատուրը, Հովսեփ Ղազարոսը և Մ. Դավիթ ստվարացում էին Դհակայի ակադեմիկոս հայերի շարքը:

Դհակայի հայկական ազդեցություն և տարածաշրջանային կենտրոնի վիճից դուրս եկան բազմաթիվ պատվարժան հայեր, որոնք նկատելի դարձան ամբողջ Բենգալում: (Հետևյալ անունները վերցված են Վիքիփեդիա կայքէջից քանզի ձեռքի տակ չունենք հուսալի այլ աղբյուրներ.-Ի.Գ.):

- Խոշա Փանոս Ղալանդար. ամենավաղ հիշատակված հայը, որը 1688-ին ունեցել է իրավագոր համաձայնագիր «Արևելյան Հնդկաստան» ընկերություն հետ, օգտվելու անգլիական նավերից՝ իր և համայնքի առևտրականների հետ մեկտեղ.
- Խոշա Իսրայելի Սարհադ, եղբորորդին է Խոշա Փանոսի, որը 1698-ին օգնել է անգլիացիներին ապահովել ընկերության համար հողակտորների տնօրինություն Կոլկատայում, Մուրդար Ազիմ ուշ Շհանից, ինչպես նաև ընկերության ներկայացուցիչ-խոսնակն էր Սուրմանի առևտրական պալատում, Մուգոլ տիրակալ Ֆարուք Սիյարի

մոտ: Իր կարևորությունը կայանում է նրանում, որ գլուխ էր բերել ընկերությանը արտոնությունների տրամադրման հարցում, տիրակալի մեծ՝ 1717-ի հրամանագիրը:

- Խոջա Պետրոս Նիկողայոս Ա. Նա դատական խորհրդական էր և ֆինանսավորում էր Ալլահվերդի Խանին, ինպես նաև ղեկավար էր հայկական համայնքում:

- Խոջա Վաչիդ. Բենգալի ամենանշանավոր հայերից: Սկսած 1753-ից, նա ուներ մենաշնորհ բարձր շահութաբերություն ապահովվող սելիտորայի առևտրի մեջ (կարևորագույնն այն ապրանքատեսակների շարքից, որը գլխավորն էր եվրոպական ընկերություններ ցանկում): Այս հայ վաճառականը հանդիսանում էր բանակցող ընկերությունների և կառավարիչ Միրաջ ուղ-Դաուլահ միջև: 18-րդ դարի կեսերին, նա կարողացել էր մտնել կառավարչի մերձավորների շրջապատ և դառնալ իր համայնքի ներկայացուցիչն այնտեղ: Իր սեփականությունն է հանդիսացել առևձագն վեց նավ. դրանք են՝ «Salamat Ressian», «Salamat Manzil», «Mobarak», «Gensamer», «Medina Baksh» և «Mobarak Manzil»:

1758-ին «Արևելյան Հնդկաստան» ընկերությունը վերցրեց նրա սելիտորայի «կայսրությունը» և արդեն 1773-ին հասցրեց դրանից ստանալ տարեկան 1 միլիոն հնդկական ռուպիի հասնող եկամուտ: Ծավոք, 1759-ին Խոջա Վաչիդը ընկերության կողմից բանտարկվեց, որտեղ էլ թունավորեց ինքն իրեն: Նրա մահից հետո, Խոջա Պետրոս Արությունը փոխարինեց նրան որպես առաջնորդ Բենգալի հայկական համայնքի:

- Խոջա Գրիգոր. հայտնի որպես Գուրգեն Խան անվանումով, նա եղել է Խոջա Պետրոսի եղբայրը և կառավարիչ Միր Ղասեմի նախարարներից: Նաև՝ կառավարչի բանակի մեջ որպես գլխավոր հրամանատար: Նրա անունը մատնանշվում է Ղոյամ Հոսեյն Միյար-ուլ-Մութախերինի վկայության մեջ որպես հրետանու հրամանատար, և կառավարչի հիմնական զինծառայողներից մեկը: 1763 թվ-ի օգոստոսին, Գրիգորի հակատամարտում, վարձու մարդասպանի կողմից ահաբեկության է ենթարկվել նա, և սպանվել:

- Զ.Գ. Նիկողայոս Պողոս. հայտնի որպես «Nicky Pogose», եղել է ե՛լ հողատեր-տանուտեր, ե՛լ վաճառական: Նա Բանգլադեշի առաջին բանկի՝ Dhaka Bank-ի բաժնետերերից է եղել, ինպես նաև մեկ անդամը՝ Դհակայի քաղաքապետական հանձնաժողովի իննը հոգանոց խորհրդի (1874-1875 թթ.):

Երբ բրիտանական շրջանն ավարտվեց և Պակիստան ժամանակաշրջանն եկավ, ձուլի առևտուրը (ծառերի տեսակ, որ սովոր են կապույտատիպ գույն արտադրել) անհաջողությունների մատնվեց, որը դրդեց փակելու տասներեք ձուլի աղացանք: Այսպիսով հայերը սկսեցին Դհակայից գաղթել և փնտրել երկրներ որոնք առիթ կտային սկսելու նույն գործը:

Դհակայի և Կոլկաթայի շրջակայքը դեռ պահպանել է հայկական անուններ.«Արմանիտոլա» և «Արմանիգաթ»: Դհակայի «Սր. Հարություն» եկեղեցին (տեղում հանաչված որպես հայկական եկեղեցի, կառուցված 1781-ին) և գերեզմանոցը, որի հողահատկացումն արել է Աղա Խաչիկ Մինասը, կանգուն վկաներն են «Արմանիտոլայի» երբեմնի հայկական ծաղկող գաղթօջախի: Եկեղեցին օծվել է Աբրահամ եպիսկոպոսի կողմից, որը հետագային դարձավ Ամենայն Հայոց Կաթողիկոս:

Երբ հայերն առևտուրի մեջ հասան նկատելի հաջողության, Մուգալ կայսր Աքբարը ազատորեն թուլատրեց հայերին իրենց հավատքին հետամուտ լինել: Դհակայի հայկական եկեղեցին դարձավ պաշտամունքի և ազգային հանդիսավայր, ուղղափառ հայության համար:

Որոշ պատմաբաններ, ներառյալ Դկտ. Մեսրոպ Հակոբ Սեթը, շարադրում են, որ այս եկեղեցին կառուցվել է ավելի վաղ շրջանում (1600-ականների սկզբին) գոյություն ունեցած փայտաշեն աղոթարան-մատուռի և հարող գերեզմանոցի տեղում: Եկեղեցու կառուցմանը իրենց նվիրատվություններով նպաստել են հայ վաճառականների (ձուլի առևտրականներ) Միքայել Սարգիսը, Աստվածատուր Գևորգը, Մարգար Պողոսը և Խոջա Պետրոսը:

1837-ին հայերն ավելացրել էին ժամացույցի աշտարակ եկեղեցու արևմտյան մասում: Զանգակատունը, որը 200 ոտք բարձրություն ուներ և հենված էր չորս կանգուն սյուներին, տեսանելի էր անգամ Դհաքայից 15 կմ. հեռու գտնվող Նարայանգանի բնակավայրից: Զանգակի ձայնը, շրջակա տարածքների համար, հանդիսանում էր հոգևոր պահանջմունքի միջավայրի խթանիչ: Բայց, աշտարակը 1897-ի երկրաշարժից հետո փլվել է: Ավելի ուշ, ծավալով փոքր փոքր ուրիշ աշտարակ է կանգնեցվել վերանորոգման ընթացքում, թեև արդեն առանց ժամացույցի:

Ծավոք, եկեղեցու աշտարակի չորս ավանդական զանգ-կոչնակները վաղուց են դադարել հնչելուց: Նախկինում դեղնավարդագույն այս եկեղեցին հիմա ներկված է դեղին և սպիտակ: Այն ունի չորս դռներ և քսանյոթ

ատուհաններ: Եկեղեցին ունի մատուռ՝ պատշգամբով, և հարյուր հոգու համար հատկացված փայտե ստարաններ:

Երբ հայկական համայնքը Դեակայում պակասեց, եկեղեցին իր ձևով դարձավ հանդիպման վայր բոլոր ուղղափառ քրիստոնյաների համար: Հիմա հայկական եկեղեցին միայն վարում է պատարագներ միայն կարևոր ուղղափառ օրացուցային և տոնական օրերի առիթներով: Մոտական հեմարանի կաթոլիկ քահանան մասնակցում և կատարում է Սուրբ Ծննդյան աղոթքների ծիսականը:

Եկեղեցու պահապան Միքել Հովսեփ Մարտիրոսյանը, որին գիտեն նրա անգլիականացված անվամբ՝ Միքայել Ջոզեֆ Մարտին, ասում էր, որ համայնքի կրոնական աշխուժությունը կանգ առավ 1960-ականին, երբ վերջին քահանան հեռացավ այստեղից, թեպետ նա՝ ինքն է փորձում եկեղեցու հայկական ժառանգության շարունակականությունն ապահովել:

Ավստրալիահայ համայնքի արքեպիսկոպոսը տարին երկու անգամ պատարագներ է մատուցում այստեղ, փրկելով այս կառույցը օտարացումից: Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին 2-րդը, Հնդկաստան կատարած իր հովվապետական այցի ընթացքում, մեկ օրով այցելել է այս եկեղեցին, 2008 թվականի Նոյեմբերի 18-ին:

Եկեղեցու դիվանը ունի պատմական արժեքավոր շատ տեղեկություններ համայնքի անցողարձերից. այնտեղ նշված են շուրջ 200 անուն, որոնք մահացել են 1833-1918 թթ. ընացքում, ինչպես նաև 250 մկրտության և 50-ից ավելի պսակադրության գրառումներ: Սև և սպիտակ գերեզմանաքարերը հիշեցնում են երբեմնի ընտանիքների մասին, որոնք են Սարգիս, Մանուկ և Արուստյուն անվամբ, որոնք Դեակայի երբեմնի երևելիներն էին, և խոշորածավալ վաճառականները ձութի, համմուքների, դեղաբույսերի և մորթու:

Ծավոք երկրի ազատագրական պատերազմի շորշոփներից, որը յուրահատուկ է ցանկացած պատմական տարածքի, զերծ չի մնացել նաև այս եկեղեցին. խառնակ ժամանակներին, եկեղեցու արծաթե սպասքն ու երգեհոնը գողացվել է, իսկ գերեզմանաքարերը քանդվել են անպատվաբեր ամբոխի կողմից:

Այս եկեղեցին, այցելուների կողմից նկարագրվում է որպես դրախտ հատիկ, ի հակադրություն շրջապատի և փողեցային երթևեկի խառնիճաղանջության: «Շրջակա փողոցները այնքան են խճողված, որ հնարավոր չէ ժամանակին տեղ հասնել և պատարագ մատուցել, քանզի միշտ, աշխատանքային օրերին, շարքակայքը նանցանելի է դառնում», նշում է «BBC»-ի բանգլադեշյան թղթակից Ալիստեր Լաուսոնը, որը 2003 թվականի Հունվարի 10-ին, պատրաստել էր մի հոդված, նվիրված Դեակայի վերջին հայի՝ Միքայել Ջոզեֆ Մարտինի առաքելությանը:

Այդ ժամանակ, Միքայել Ջոզեֆ Մարտինը 73 տարեկան էր, և ասում էր. «Ես, երևի Բանգլադեշի վերջին հայ բնակիչն եմ, բայց իմ կարողության չափով ամեն ինչ կանեմ, որպեսզի դրսից եկող ինձ փոխարինողը անի ա՛յն՝ ինչ-որ ես եմ արել այսքան տարի միայնակ: Հակառակ դեպքում, հայկական ժառանգության դարերի այս ավանդությունը կկորչի մեկ գիշերվա ընթացքում,՝ ասում էր նա թղթակցին և շարունակում. – ես վատ օրեր էլ եմ տեսել, բայց միշտ խուսանալով եմ, և հույսով եմ որ հայերը երբևէ կգան այստեղ, բիզնեսի կամ բնակվելու առումով, և կշարունակեն համայնքի հարյուրամյա ավանդությունները: Դրանից հետո ես հանգիստ կհեռանամ այս աշխարհից, միավորվելով իմ կնոջ հետ»:

Բանգլադեշի մշակութային և հնագիտության ժառանգության համատեքստում, հայկական եկեղեցու կարևորությունն ընդգծվեց այն փաստով, որ 2001 թվականի Ապրիլի 30-ին, երկրի փոստային ծառայությունը թողարկեց (քառախումբ) չորս դրոշմաթղթեր (տե՛ս Scott #634), նվիրված Բանգլադեշի հնագիտական պաշտամունքային մասունքներին, որի երրորդ դրոշմաթուղթը, Արմանիթոլայի հայկական այս եկեղեցին էր:

«Մր. Հարություն» եկեղեցին խորհուրդն է Դեակայի հայկական համայնքի փառավոր անցյալի, բայց ինչքա՞ն...

Իգոր Գրիգորյան

